Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ
Պետական Հիմնարկին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն Փակ Բաժնետիրական Ընկերության և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2022թ. ապրիլի 28-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությամբ արտահայտվել է առանց վերապահման կարծիք՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

28 մարտի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	11,217,179	6,551,725
Ոչ նյութական ակտիվներ	5	563,401	792,821
		11,780,580	7,344,546
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		58,366	20,021
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	763,187	378,480
Այլ ընթացիկ ակտիվներ		4,367	9,960
Մնացորդներ դրամարկղում և բանկում	7	1,602,868	309,135
		2,428,788	717,596
Ընդամենը ակտիվներ		14,209,368	8,062,142

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	8	2,391,107	2,072,293
Պահուստային կապիտալ	8	283,599	256,503
Վերագնահատման պահուստ	8	5,603,775	1,598,918
Էմիսիոն եկամուտ		755	755
Կուտակված շահույթ		783,151	715,771
		9,062,387	4,644,240
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	9	262,500	-
Հետաձգված եկամուտ	10	1,780,748	2,373,549
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,162,878	295,959
		3,206,126	2,669,508
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	9	87,500	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	1,763,197	697,300
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		90,158	51,094
		1,940,855	748,394
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		14,209,368	8,062,142

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. մարտի 28-ին

Հովհաննես Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

Օֆելյա Գյոդակյան
Գլխավոր հաշվապահ

Աննա Սիրադեղյան
Գլխավոր հաշվապահի տեղակալ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական գործունեությունից հասույթ	13	5,272,508	5,065,886
Գովազդից և հովանավորչությունից հասույթ	14	655,709	485,120
Դրամաշնորհներից եկամուտ	15	596,051	1,022,786
Այլ եկամուտ	16	237,110	249,396
Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր	17	(2,002,965)	(1,643,072)
Հեռարձակման ծախսեր	18	(246,063)	(284,388)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(2,782,892)	(2,507,294)
Մաշվածություն և ամորտիզացիա		(967,149)	(1,300,409)
Այլ ծախսեր	19	(487,517)	(421,737)
Ֆինանսական ծախսեր		(20,423)	-
Հիմնական միջոցների արժեզրկումից ծախս		(261,276)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		17,800	5,002
Գործառնական գործունեությունից շահույթ		10,893	671,290
Մշակութային միջոցառումների կազմակերպումից հասույթ	20	4,340,197	-
Մշակութային միջոցառումների կազմակերպումից ծախսեր	20	(3,823,935)	-
Շահույթ մինչև հարկերը		527,155	671,290
Շահութահարկի գծով ծախս	21	(182,786)	(120,717)
Տարվա շահույթ		344,369	550,573
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում		4,968,022	-
Հետաձգված հարկի ազդեցություն		(894,244)	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		4,073,778	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		4,418,147	550,573

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրություններ ի հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա-դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնա-հատման պահուստ	Պահուս-տային կապիտալ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,213,058	755	1,712,532	85,555	600,167	3,612,067
Տարվա շահույթ	-	-	-	-	550,573	550,573
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	550,573	550,573
Վերագնահատման պահուստի օգտագործում	_	_	(113,614)	_	113,614	_
Պահուստային հիմնադրամի աճ	_	_	_	170,948	(170,948)	_
Տեղաբաշխված բաժնետոմսեր	859,235	_	_	_	(86)	859,149
Հայտարարված շահաբաժիններ	_	_	_	_	(377,549)	(377,549)
Գործարքներ սեփականատերերի հետ	859,235	_	_	_	(377,635)	481,600
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,072,293	755	1,598,918	256,503	715,771	4,644,240

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,072,293	755	1,598,918	256,503	715,771	4,644,240
Տարվա շահույթ	-	-	-	-	344,369	344,369
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	344,369	344,369
Կանոնադրական կապիտալի համալրում	318,814	-	-	-	(318,814)	-
Գործարքներ սեփականատերերի հետ	318,814	-	-	-	(318,814)	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	4,073,778	-	-	4,073,778
Վերագնահատման պահուստի օգտագործում	-	-	(68,921)	-	68,921	-
Պահուստային կապիտալի աճ	-	-	-	27,096	(27,096)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,391,107	755	5,603,775	283,599	783,151	9,062,387

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	344,369	550,573
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,474,789	1,675,161
Հիմնական միջոցների արժեզրկում	261,276	2,733
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում	-	(11,886)
Շնորհից եկամուտ	(592,801)	(1,022,786)
Տոկոսային ծախս	20,423	-
Շահութահարկի գծով ծախս	182,786	120,717
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(17,800)	(5,002)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,673,042	1,309,510
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(392,231)	(163,587)
Պաշարների նվազում	(38,345)	(574)
Այլ ակտիվների փոփոխություն	5,593	7,941
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն աճ	1,109,942	225,595
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	2,358,001	1,378,886

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վճարված տոկոսներ	(20,423)	-
Վճարված շահութահարկ	(171,047)	(242,338)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	2,166,531	1,136,548
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,204,078)	(1,078,979)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,204,078)	(1,078,979)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից և վարձակալական պարտավորությունների զծով մուտքեր	350,000	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	350,000	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	1,312,453	57,569
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(18,719)	(71)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	309,134	251,637
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	1,602,868	309,135

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 44-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: